

Ուշադրություն՝ Պայմանագրի գինը նշված է որպես ծառայությունների մատուցման առավելագույն գին, որը փաստացի մատուցված ծառայության համապատասխան, հնարավոր է նվազեցվի:

**ԾԱՂԿԱԾՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԾՔ-ԳՀԾՁԲ-24/2»**

ք. Ծաղկաձոր

«26» դեկտեմբեր 2023թ.

«Ծաղկաձորի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Ն.Հարությունյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԶԻ ԸՆԴ ԷՅ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Ստեփանյանի, որը գործում է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «**Ծաղկաձորի համայնքապետարանի ծառայողական ավտոմեքենաների 2024թ. ընթացքում ընթացիկ վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծառայություններ**»-ի մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **6700000 (վեց միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:**¹

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: **Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի (համաձայնագրի) վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական**

¹ Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:

միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում^{18.1}:

4.3 Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝
ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxԲ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Բ-ն մատուցված ծառայության քանակն է:²⁰

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի **3 (երեք)** տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի **0.18 (զրո ամբողջ տասնութ հարյուրերորդական)** տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Ծաղկաձորի համայնքապետարան
ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9
Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 03027029
ՀՀ 900122002141

Համայնքի ղեկավար՝ **Ն.Հարությունյան**

(ստորագրություն)

Կ.Տ.



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«ՋԻ ԸՆԴ ԷՅ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ
ք. Երևան, Ռուբինյանց 31
ք. Երևան, Արշակունյաց 119/12
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570089682710100
ՀՎՀՀ 01323194
Հեռ. 055465456

Տնօրեն՝ **Ա. Ստեփանյան**

(ստորագրություն)

Կ.Տ.



Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Զ/Կ	Գնումների պլանով նախ. միջանցիկ ծածկագրի՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանում	Զ/Մ	Ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր քանակ	Մատուցման	
						Հասցե	Ժամկետներ
1	50111130/502	ՏՈՅՈՏԱ ՔԵՄՐԻ, 2008թ. արտադրության ավտոմեքենայի ընթացիկ վերանորոգման եվ տեխնիկական սպասարկման ծառայություն	դրամ	Մինչև 3 000 000	1	Ըստ Կատարողի գտնվելու վայրի	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 31.12.2024թ.
2	50111130/503	ՏՈՅՈՏԱ ԿՈՐՈԼԼԱ, 2008թ. արտադրության ավտոմեքենայի ընթացիկ վերանորոգման եվ տեխնիկական սպասարկման ծառայություն	դրամ	Մինչև 3 000 000	1	Ըստ Կատարողի գտնվելու վայրի	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 31.12.2024թ.
3	50111130/504	ԳԱՁ 31100,1998թ. արտադրության ավտոմեքենայի ընթացիկ վերանորոգման եվ տեխնիկական սպասարկման ծառայություն	դրամ	Մինչև 700 000	1	Ըստ Կատարողի գտնվելու վայրի	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 31.12.2024թ.

***Ծառայությունները մատուցվելու են ըստ կից ներկայացված գնացուցակի. իսկ վճարումները կատարվելու են փաստացի մատուցված ծառայությունների դիմաց:**

**ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ
ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐ 1-3**

Ծառայությունները մատուցվում են 2024 թվականի ընթացքում՝ ըստ կարիքի առաջացման:

Կատարողը պետք է ունենա անհրաժեշտ նյութատեխնիկական բազա և մասնագիտական անձնակազմ, այդ թվում՝

-սպասարկման տարածքում ավտոպահեստամասերի պահեստի կամ խանութի առկայություն,

-պետք է ունենա վերանորոգման համար անհրաժեշտ բոլոր արտադրամասերը (ընթացամասի, էլեկտրականության, յուղման, անվաբացքի կարգավորման, վուլկանացման, ինժեկտորի վերանորոգման, ղեկային մասի, շարժիչի, փոխանցման տուփի և կամրջակների վերանորոգման, մեքենայի ախտորոշման և այլ անհրաժեշտ սարքավորումներ և ծառայություններ, ինչպես նաև՝ զոդման աշխատանքներ իրականացնելու հնարավորություն):

Պատվիրատուի ավտոմեքենան տեխնիկական սպասարկման կայան ժամանելուց հետո Կատարողը պետք է ապահովի ավտոմեքենայի արտահերթ սպասարկում՝ ժամանելու պահից առավելագույնը 30 (երեսուն) րոպե հետո, որից անմիջապես հետո Կատարողը մեկ ժամվա ընթացքում պետք է ապահովի ավտոմեքենայի ախտորոշումը՝ տրամադրելով ավտոմեքենայի վրա իրականացվելիք աշխատանքների, երաշխիքների, դրանց կատարման ժամկետների մասին տեղեկանք (տեղեկանքում ներառվող ծառայությունները պետք է համապատասխանեն պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ցանկին՝ SU 1, SU 2), ընդ որում՝ աշխատանքների կատարման ավարտի համար նախատեսված

առավելագույն ժամկետը չի կարող ավել լինել 2 օրից, բացառությամբ այն դեպքերի, երբ Կատարողը Պատվիրատուին տրամադրում է տեղեկանք-հիմնավորում ծառայությունների մատուցումը 2 (երկու) օր անհնարին լինելու վերաբերյալ, որի մասով Պատվիրատուի կողմից սահմանվում է ծառայությունների մատուցման խելամիտ ժամկետ:

Ավտոմեքենա տեխնիկական կայան ժամանելուց՝ առավելագույնը 1(մեկ) ժամ 30(երեսուն) րոպե հետո, պետք է սկսվի ավտոմեքենայի սպասարկման գործընթացը(ծառայությունների մատուցումը):

Կատարողը պետք է կարողանա միաժամանակ սպասարկել թվով 3-5 (երեքից-հինգ) ավտոմեքենա և ունենա 5 (հինգ) հատ էլ. ամբարձիչ, առնվազն 2,5 տոննա բարձրացնելու հնարավորությամբ(домкрат):

Յուղի փոխման, լուսարձակների փոխման և նմանատիպ այլ ծառայությունները, որոնք չեն պահանջում ախտորոշում, պետք է իրականացվեն անմիջապես՝ մեքենայի տեխնիկական կայան ժամանելու պահին և տվյալ ծառայությունները պետք է մատուցվեն առավելագույնը 1(մեկ) ժամվա ընթացքում:

Կատարողի կողմից սպասարկումը պետք է իրականացվի աշխատանքային օրերին ժամը 09:00-ից մինչև 18:00-ն ընկած ժամանակահատվածում:

Կատարողը պետք է ունենա առնվազն թվով 4 (չորս) ավտոմեքենայի համար նախատեսված կայանման(պահպանման) վայր, ընդ որում ավտոմեքենաների այնտեղ գտնվելու ամբողջ ընթացքում՝ Կատարողի կողմից պետք է իրականացվի շուրջօրյա (24 ժամ) տեսահսկման և պահակային հսկողություն և այդ ընթացքում իրականացված տեսաձայնագրությունը պետք է պահպանվի առնվազն 30(երեսուն) օր և պահանջի դեպքում 1(մեկ) աշխատանքային օրվա ընթացքում տրամադրվի Պատվիրատուին:

Փոխարինված ավտոմասերը պահանջի դեպքում՝ մեկօրյա ժամկետում, պետք է վերադարձվեն Պատվիրատուի ներկայացուցչին:

Նորոգման ծառայությունները պետք է իրականացվեն կից ներկայացված ցանկին համապատասխան:

Տեխսպասարկումն իրականացնող կայանը պետք է ունենա քարշակ:

Երաշխիքներ՝ կատարված աշխատանքներ համար 6 ամիս, պահեստամասերի համար 6 ամիս, ռետինե դետալների համար 6 ամիս:

Ավտոպահեստամասերը պետք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ:

Ծառայությունները մատուցվելու են՝ ըստ Պատվիրատուի պատվերի, իսկ վճարումները կատարվելու են փաստացի մատուցված ծառայությունների դիմաց:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ծաղկաձորի համայնքապետարան
ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9

Կենտրոնական գանձապետարան

ՀՎՀՀ 03027029

ՀՀ 900122002141

Համայնքի ղեկավար

Ն. Հարությունյան

(ստորագրություն)



ԿԱՏԱՐՈՂ

«ՋԻ ԸՆԴ ԷՅ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ

ք. Երևան, Ռուբինյանց 31

ք. Երևան, Արշակունյաց 119/12

«Ամերիաբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1570089682710100

ՀՎՀՀ 01323194

Հեռ. 055465456

Տնօրեն Ա. Աստիֆանյան

(ստորագրություն)



«Հ դրամ

		Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**														
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը		
1	5011130/502	ՏՈՅՈՏԱ ՔԵՄՐԻ, 2008թ. արտադրության ավտոմեքենայի ընթացիկ վերանորոգման եվ տեխնիկական սպասարկման ծառայություն
2	5011130/503	ՏՈՅՈՏԱ ԿՈՐՈԼԼԱ, 2008թ. արտադրության ավտոմեքենայի ընթացիկ վերանորոգման եվ տեխնիկական սպասարկման ծառայություն
3	5011130/504	ԳԱՁ 31100,1998թ. արտադրության ավտոմեքենայի ընթացիկ վերանորոգման եվ տեխնիկական սպասարկման ծառայություն

Ծառայությունները մատուցվելու են՝ ըստ Պատվիրատուի պատվերի, իսկ վճարումները կատարվելու են փաստացի մատուցված ծառայությունների դիմաց:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ծաղկաձորի համայնքապետարան
 ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9
 Կենտրոնական գանձապետարան
 ՀՎՀՀ 03027029
 ՀՀ 900122002141
 Համայնքի ղեկավար **Ե. Տարությունյան**
 (ստորագրություն)
 Կ.Տ.



ԿԱՏԱՐՈՂ

«ՋԻ ԸՆԴ ԷՅ ՄՈԹՐՈՄ» ՍՊԸ
 ք. Երևան, Ռուբինյանց 31
 ք. Երևան, Արշակունյաց 119/12
 «Ամերիաբանկ» ՓԲԸ
 Հ/Հ 1570089682710100
 ՀՎՀՀ 01323194
 Հեռ. 055465456
 Տնօրեն **Ա. Ասրեղյան**
 (ստորագրություն)
 Կ.Տ.



Հ/հ	Ընթացիկ նորոգման աշխատանքների անվանումները	Перечень наименований текущих, средних и капитальных ремонтных работ	Տարածքային Վերականգնում 1,8 GAS 2008թ. - 1 հ . ,	Տարածքային Վերականգնում 3,5 GAS 2008թ. 1 հ	ԳՈՁ 31100, 1998թ.
1	Բռնկման համակարգի ստուգում	Проверка системы зажигания	2,081	1,828	
2	Կցորդման համակարգի ստուգում	Проверка системы сцепления	2,081	1,828	
3	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	Проверка работы АКПП	2,081	1,828	
4	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	Проверка работы раздаточной коробки			
5	ABS համակարգի ստուգում	Проверка системы ABS	2,081	1,828	
6	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	Проверка работы электрооборудования	2,081	1,828	
7	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	Проверка работы системы управления	2,081	1,828	
1. Շարժիչ					
8	Շարժիչի հանում և տեղադրում	Снятие и установка двигателя	20,806	18,276	9,750
9	Շարժիչի վերանորոգում ներառյալ բոլոր աշխատանքները	Ремонт двигателя включая все работы	124,834	109,657	58,500
10	Շարժիչի քանդում արատավորում և հավաքում	Разборка и дефектовка двигателя с последующей сборкой	24,967	21,931	11,700
11	Շարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինումով	Снятие и установка головки двигателя с заменой прокладки	12,483	10,966	7,800
12	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հոկումով	Ремонт головки двигателя со сваркой и шлифовкой	16,645	14,621	11,700
13	Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հոկումով	Замена замков голоки двигателв со шлифовкой	4,993	4,386	2,340
14	Վառոցքի մոմի բնիկի նորոգում	Ремонт гнезда свечи зажигания	1,248	1,097	1,170
15	Շարժիչի փականների զսպանակների փոխարինում	Замена пружин клапанов джигателя	416	366	390
16	Փականների խցուկների փոխարինում 1 կ-տ	Замена сальника клапанов 1 к-т	12,483	10,966	3,900
17	Հրիչների կամ հիդրոտակների փոխարինում 1 կ-տ	Замена толкателей или гидротолкателей 1 к-т	12,483	10,966	5,850
18	Շարժիչի մխցաօդերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	Замена поршневых колец, основных и шатуновых прокладок	29,128	25,587	15,600
19	Ծնկաձև լիսեռի հոկում	Шлифовка коленвала	16,645	21,931	11,700
20	Ծնկաձև լիսեռի փոխարինում	Замена коленвала	16,645	18,276	9,750
21	Ծնկաձև լիսեռի ներդրակների փոխարինում 1 կ-տ	Замена прокладок коленвала 1к-т	6,242	7,310	3,900
22	Ծնկաձև լիսեռի ատամնակի փոխարինում	Замена шестерни коленвала	6,242	5,483	3,900
23	Ծնկաձև լիսեռի ուղղում	Правка коленвала	16,645	18,276	11,700
24	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	Замена переднего сальника коленвала	6,242	5,483	3,900
25	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	Замена заднего сальника коленвала	20,806	25,587	15,600
26	Շարժիչի բլոկի փոխարինում	Замена блока двигателя	58,256	65,794	23,400
27	Շարժիչի զսպանակի փոխարինում 1 հատ	Замена цилиндра двигателя 1 шт	12,483	14,621	
28	Շարժիչի բլոկի հոկում	Шлифовка блока двигателя	20,806	25,587	11,700
29	Մխցի փոխարինում 1 հատ	Замена пошня двигателя 1 шт	8,322	10,966	3,900
30	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена распревала	62,417	65,794	17,550
31	Բաշխիչ լիսեռի ակաճեցների հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена подшипников распревала	10,403	10,966	5,850
32	Բաշխիչ լիսեռի խառնակի փոխարինում	Замена сальников распревала	6,242	5,483	3,900
33	Փոկանիկի փոխարինում	Замена ремня	4,993	5,483	2,340
34	Շարժիչի շղթայի փոխարինում	Замена цепи двигателя	20,806	21,931	11,700
35	Յուղի մղիչի շղթայի փոխարինում	Замена цепи масляного насоса	8,322	7,310	
36	Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում)	Ремонт картера двигателя (сварка)	6,242	5,483	5,850
37	Շարժիչի քարտերի փոխարինում, միջադիրի փոխարինումով	Замена картера двигателя с заменой прокладки	4,993	5,483	3,120
38	Շարժիչի քարտերի միջադիրի փոխարինում	Замена прокладки картера двигателя	4,993	5,483	2,730
39	Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով	Снятие и установка и чистка картера двигателя	4,161	5,483	2,340
40	Շարժիչի յուղի մղիչի փոխարինում	Замена масляного насоса двигателя	10,403	9,138	7,020
41	Շարժիչի յուղի մղիչի նորոգում, մաքրում	Ремонт и чистка масляного насоса двигателя			
42	Շարժիչի յուղի մղիչի մաքրում	Чистка масляного насоса двигателя	2,081	1,828	1,950
43	Շարժիչի յուղի մղիչի կարգավորում	Настройка масляного насоса двигателя	2,081	1,828	1,950
44	Յուղի մղիչի թաթիկի փոխարինում	Замена лапки масляного насоса двигателя	2,081	1,828	1,950
45	Յուղի ծորակի փոխարինում	Замена масляного канала	4,161	3,655	
46	Օդաքաշակ փողոցի փոխարինում	Замена трубки воздухохборника	2,081	1,828	
47	Շարժիչի վառելիքի բարձր ճնշման մղիչի փոխարինում	Замена топливного насоса высокого давления двигателя	10,403	10,966	
48	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена подушки двигателя	6,242	7,310	3,900
49	Բ/լիսեռի կապարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена крышки распревала	33,289	32,897	
50	Ուղղորդիչ վանների փոխարինում	Замена направляющих втулок	2,081	1,828	1,950
51	Թափանիկի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена маховика	10,403	12,793	5,850

52	Շարժիչի կապույրի փոխարինում	Замена заслонки двигателя	6,242	7,310	
53	Շարժիչի կապույրի միջադիրի փոխարինում	Замена прокладки заслонки двигателя	6,242	7,310	3,900
54	Մխցանատի փոխարինում	Замена пальцев	2,081	1,828	1,170
55	Շարժիչի շարժաթևի փոխարինում	Замена шатунов двигателя	8,322	9,138	3,900
56	Մխցանային օղակների փոխարինում I կ-տ	Замена пошневых колец I к-т	24,967	32,897	11,700
57	Շարժիչի բաշխիչ լիսեռի երկթևակի փոխարինում	Замена шплинта распредвала двигателя	208	183	195
58	Ատամնակի փոխարինում	Замена шестерни	4,161	3,655	
59	Ատամնավոր փոկի պատյանի փոխարինում	Замена кожаня зубчатого ремня	6,242	5,483	
60	Սուխարիկ փոխարինում	Замена сухарика	4,161	4,752	1,950
61	Շարժիչի կալուկի փոխարինում	Замена колонки двигателя	4,161	3,655	
62	Շարժիչի հանդարտիչի փոխարինում	Замена успокоителя двигателя	8,322	9,138	4,680
63	Շարժիչի փոկի հորվակի փոխարինում	Замена ремня ролика двигателя	8,322	7,310	
64	Շարժիչի հորվակի առանցքակալի փոխարինում	Замена подшипника ролика двигателя	4,993	4,386	
65	Շարժիչի առջևի կախարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով	Замена передней крышки двигателя, снятие, установка прокладки с заменой	14,564	18,276	
66	Շարժիչի յուղի արանքաչափիչի (Քցտ) իրանի փոխարինում	Замена шейки масляного щупа	3,329	4,752	1,170
67	Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում	Замена натяжителя ремня двигателя	6,242	9,138	
68	Շարժիչի գամանտի փոխարինում	Замена хомута двигателя	1,456	1,279	
69	Շարժիչի գամանտի փոխարինում բնիկի նորոգումով	Замена хомута двигателя, ремонт гнезда	7,906	6,945	
70	Գլխիկի հեղույսի փոխարինում	Замена болта головки	2,497	2,193	1,170
71	Մեկաձև լիսեռի հեղույսի փոխարինում	Замена болта коленвала	2,497	2,193	1,170
72	Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում	Снятие и установка электросистемы	6,242	5,483	
73	Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում	Снятие и установка системы подачи топлива двигателя	8,322	7,310	
2. Անկախարձան, սնման և յուղման համակարգ / Системы управления, питания и смазки					
74	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	Замена масла и масляного фильтра	416	366	390
75	Ավտոմեքենայի յուղում	Смазка автомобиля	832	731	780
76	Համակարգչային ախտորոշում, թերությունների վերացում	Компьютерная диагностика с устранением неполадок	3,745	3,290	
77	Յուղի ծաղիատորի փոխարինում	Замена масляного радиатора	8,322	7,310	
78	Յուղի ծաղիատորի նորոգում	Ремонт масляного радиатора	8,322	7,310	
79	Յուղի զտիչի փականի փոխարինում	Замена клапана масляного фильтра	2,081	1,828	
80	Արտածման կալեկտորի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена выпускного коллектора	12,483	14,621	3,900
81	Ներածման կալեկտորի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена впускного коллектора	12,483	14,621	
82	Արտածման կալեկտորի միջադիրի փոխարինում	Замена прокладки выпускного коллектора	12,483	14,621	5,850
83	Ներածման կալեկտորի միջադիրի փոխարինում	Замена прокладки впускного коллектора	12,483	14,621	
84	Վառելիքի փողրակի փոխարինում	Замена топливного шланга	2,497	2,924	780
85	Վառոցքի մոմի փոխարինում	Замена свечей зажигания	2,081	1,828	780
86	Վառելիքի նուրբ մաքրման զտիչի փոխարինում	Замена топливного фильтра тонкой очистки	4,993	5,483	
87	Օդի զտիչի փոխարինում	Замена воздушного фильтра	1,248	1,097	780
88	Կոնդիցիոների զտիչի փոխարինում	Замена фильтра кондиционера	1,248	1,097	
89	Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена измерителя воздуха	2,913	2,559	
90	Օդի ծախսաչափիչի փողրակի հանում և տեղադրում	Снятие и установка шланга датчика расхода кислорода	2,081	1,828	
91	Օդաբաշխի փողրակի հանում և տեղադրում	Снятие и установка шланга воздухоотвода	2,081	1,828	
92	Ավտոմատ փոխանցման տուփի ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена блока управления АКПП	29,128	32,897	
93	Ինժեկտորի բոցամուղի փոխարինում	Замена форсунок инжектора	4,161	3,655	
94	Ինժեկտորի բոցամուղի մաքրում	Чистка форсунок инжектора	6,242	5,483	
95	Բոցամուղի կոդավորում	Кодировка форсунок	8,322	7,310	
96	Ինժեկտորի բոցամուղի խտարուկների փոխարինում	Замена сальников форсунок инжектора	4,993	4,386	
97	Բենզոնոսոսի փոխարինում	Замена бензонасоса	6,242	5,483	3,120
98	Վառելիքի կոշտ մաքրման զտիչի փոխարինում	Замена фильтра грубой очистки топлива	2,497	2,193	1,170
99	Վառելիքի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена трубки топлива	2,081	1,828	
100	Բռնկման կարգավորում	Настройка зажигания	2,081	1,828	
101	CO կարգավորում	Настройка CO	2,081	1,828	
102	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие установка или замена блока управления	6,242	7,310	
103	Ղեկավարման բլոկի վերանորոգում	Ремонт блока управления	12,483	14,621	
104	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена топливного бака	6,242	5,483	3,900
105	Վառելիքի բաքի մաքրում	Чистка топливного бака	3,745	3,290	1,170
106	Արագարարի ուռնակի փոխարինում	Замена педали ускорителя	2,081	1,828	
107	Արագարարի ուռնակի սովի փոխարինում	Замена датчика педали ускорителя	2,081	1,828	
108	Օդի ծախսի սովի փոխարինում	Замена кислородного датчика	4,161	3,655	
109	Տրամպորի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена траблера			5,850

110	Տրամյորի վերանորոգում	Ремонт траблэра			3,120
111	Ջրի ջերմաստիճանի տվյալի փոխարինում	Замена датчика температуры охлаждающей жидкости	6,242	5,483	3,120
112	Ջրի խողովակի, փողոսի փոխարինում	Замена шланга охлаждающей жидкости	2,081	1,828	1,170
113	Բենզոգրաքի բենզոմոնիտի ցանցի փոխարինում	Замена сетки безнасоса бензобака	2,081	1,828	
114	Բենզոգրաքի բենզոմոնիտի ցանցի մաքրում	Чистка сетки безнасоса бензобака	2,081	1,828	
115	Յուղի ճնշման տվյալի փոխարինում	Замена датчика масляного давления	4,993	4,386	2,340
116	Տվյալի փոխարինում	Замена датчика	2,081	1,828	1,170
3. Սառեցման և արտաձյուղի համակարգ / Системы охлаждения и выхлопа					
117	Հովիարի փոխարինում	Замена вентилятора	8,322	7,310	2,340
118	Հովիարի փոխարինում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена ремня вентилятора	4,993	4,386	1,560
119	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена радиатора	8,322	7,310	3,900
120	Ռադիատորի կալուսակի փոխարինում	Замена кронштейна радиатора	2,081	1,828	1,170
121	Ռադիատորի փողոսի փոխարինում	Замена шланга радиатора	2,081	1,828	1,170
122	Կոնդիցիոների կոմպրեսորի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена компрессора кондиционера	10,403	9,138	
123	Կոնդիցիոների կալուսակի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена кронштейна кондиционера	2,081	1,828	
124	Կոնդիցիոների առանցքակալի փոխարինում	Замена подшипника кондиционера	4,161	3,655	
125	Կոնդիցիոների ռադիատորի փոխարինում	Замена радиатора кондиционера	8,322	7,310	
126	Կոնդիցիոների ռադիատորի նորոգում	Ремонт радиатора кондиционера	8,322	10,966	
127	Կոնդիցիոների կոմպրեսորի նորոգում	Ремонт компрессора кондиционера	8,322	7,310	
128	Ընդարձակող բաքի փոխարինում	Замена расширительного бака	4,161	3,655	1,560
129	Ընդարձակող բաքի փողոսի փոխարինում	Замена шланга расширительного бака	2,081	1,828	1,170
130	Ջրի ծորակի փոխարինում	Замена краника охлаждающей жидкости	1,248	1,097	780
131	Հովացման հիդրոկոնդուկտի փոխարինում	Замена гидроразводника	4,161	3,655	
132	Հովացման համակարգի ռետինե փողոսի փոխարինում	Замена резинового шланга системы охлаждения	1,248	1,097	1,170
133	Հովիարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена мотора вентилятора	6,242	5,483	
134	Հովիարի թևանվի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена лопастей вентилятора	4,161	3,655	1,170
135	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված	Замена радиатора печки, включая все работы	18,725	10,966	5,850
136	Վառարանի ռադիատորի նորոգում	Ремонт радиатора печки	4,161	3,655	3,900
137	Վառարանի շարժիչի փոխարինում	Замена мотора печки	8,322	7,310	3,900
138	Թերմոստատի փոխարինում	Замена термостата	6,242	6,214	3,120
139	Ջրի մոլի փոխարինում միջադիրով	Замена водяной помпы с прокладкой	8,322	7,310	5,070
140	Գեներատորի փոխարինում	Замена ремня генератора	4,993	5,117	1,950
141	Գեներատորի փոխարինում և ձգող հոլովակի փոխարինում	Замена натяжного ролика генератора	4,993	4,386	
142	Ջրի ռադիատորի վերանորոգում	Ремонт радиатора охлаждающей жидкости	22,886	23,759	11,700
143	Սառեցման համակարգի օդահանում	Выведение воздуха из системы охлаждения	2,081	1,828	
144	Խլարարի կատալիզատորի տվյալի փոխարինում	Замена датчика катализатора глушителя	4,161	3,655	
145	Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена глушителя	4,161	3,655	2,730
146	Խլարարի 1 հատ խողովակի փոխարինում	Замена одной трубы глушителя	4,161	3,655	3,120
147	Խլարարի անուրի (хамуր) փոխարինում	Замена хомута глушителя	832	731	780
148	Խլարարի ներդիրի փոխարինում	Замена прокладки глушителя	4,161	3,655	
149	Խլարարի կախացի փոխարինում	Замена подвески глушителя	4,161	3,655	
150	Հովացման հեղուկի փոխարինում	Замена охлаждающей жидкости	1,248	1,097	1,170
151	Աշխատանքային կամ զլխ. զլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена рабочего или главного цилиндра			5,850
152	Աշխատանքային կամ զլխ. զլանի հիմնական նորոգում և ներառյալ աշխատանքները	Капитальный ремонт рабочего или главного цилиндра включая все работы			7,800
153	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	Замена дисков сцепления и подшипников			9,750
154	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена педали сцепления			1,950
155	Կցորդման երկժանի փոխարինում	Замена вилки сцепления			1,950
156	ՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	Капитальный ремонт коробки передач включая все работы			46,800
157	ՓՏ-ի առջևի խտարուկի փոխարինում	Замена переднего сальника коробки передач			5,850
158	ՓՏ-ի հետևի խտարուկի փոխարինում	Замена заднего сальника коробки передач			5,850
159	ՓՏ-ի և ԱՓՏ-ի հանում և տեղադրում	Снятие и установка коробки передач и автоматической коробки передач	24,967	21,931	7,800
160	ՓՏ-ի քանոնում, արտավորում, հավաքում	Разборка, дефектовка и сборка коробки передач			7,800
161	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена кожуха коробки передач			5,850
162	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	Замена подшипника коробки передач			7,020
163	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	Замена шестерни коробки передач			5,850
164	ՓՏ-ի առաջնային լիսեռի փոխարինում	Замена первичного вала коробки передач			7,800
165	ՓՏ-ի բարձրիկի փոխարինում	Замена подушки коробки передач			3,120
166	ՓՏ-ի յուղի փոխարինում	Замена масла коробки передач			780
167	ԱՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	Капитальный ремонт автоматической коробки передач включая все работы	166,446	201,038	
168	ԱՓՏ-ի հավաքածուի փոխարինում	Замена ремкомплекта автоматической коробки передач			
169	ԱՓՏ-ի առանցքակալի փոխարինում	Замена шестерни автоматической коробки передач	16,645	18,276	

170	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена конвертера автоматической коробки передач	16,645	14,621	
171	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	Замена ведущего диска автоматической коробки передач	16,645	14,621	
172	ԱՓՏ-ի կցորդման զիսավոր զանի կալունակի փոխարինում	Замена кронштейна главного бочка сцепления автоматической коробки передач	16,645	14,621	
173	ԱՓՏ-ի սղննիղների փոխարինում	Замена соленоидов автоматической коробки передач	16,645	14,621	
174	ԱՓՏ-ի համակարգչի և սղննիղների փոխարինում	Замена компьютера и соленоидов автоматической коробки передач	41,611	43,863	
175	ԱՓՏ-ի յուղի մղիչի փոխարինում	Замена масляного насоса автоматической коробки передач	20,806	18,276	
176	ԱՓՏ-ի յուղի մղիչի խտարուկների փոխարինում	Замена сальников масляного насоса автоматической коробки передач	6,242	5,483	
177	ԱՓՏ-ի ռադիատորի նորոգում	Ремонт радиатора автоматической коробки передач	4,161	3,655	
178	ԱՓՏ-ի ռադիատորի փոխարինում	Замена радиатора автоматической коробки передач	10,403	9,138	
179	ԱՓՏ-ի հիդրոֆտի փոխարինում	Замена гидромфты автоматической коробки передач	12,483	10,966	
180	ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում	Замена масляного фильтра автоматической коробки передач	8,322	7,310	
181	ԱՓՏ-ի յուղի փոխարինում	Замена масла автоматической коробки передач	4,161	3,655	
182	ԱՓՏ-ի զտիչի լվացում, մաքրում՝ քարտերի հանում և տեղադրումով	Промывка и чистка фильтра автоматической коробки передач со снятием установкой картера	4,161	3,655	
5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ Բаздаточная коробка, карданный вал					
183	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена карданного вала			5,850
184	Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում	Замена крестовин карданного вала			3,120
185	Հետևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена заднего моста			11,700
186	Հետևի կամրջակի լիկատար քանդում, ադատավորում և հավաքում	Полная разборка, дефектовка и сборка заднего моста			23,400
187	Հետևի կամրջակի մասնակի քանդում, ադատավորում և հավաքում	Частичная разборка, дефектовка и сборка заднего моста			11,700
188	Հետևի կամրջակի կիսաստևու հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена полуоси заднего моста			9,750
189	Հետևի կամրջակի կիսաստևու առանցքակալի փոխարինում	Замена подшипника полуоси заднего моста			5,850
190	Հետևի կամրջակի կիսաստևու առանցքակալի խտարուկների փոխարինում	Замена сальника подшипника полуоси заднего моста			3,120
191	Հետևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	Замена дифференциала заднего моста			15,600
192	Կամրջակի իրանի փոխարինում (փցսՍՄ)	Замена корпуса моста			13,650
193	Կամրջակի յուղի փոխարինում	Замена масла моста			1,170
194	Տրավերսի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена traversa	24,967	21,931	11,700
195	Ձախ կամ աջ հողակալի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена левого или правого шарнира (ШРУС)	12,483	10,966	
196	Առջևի անվակուղի առանցքակալի փոխարինում	Замена подшипника передней ступицы	8,322	7,310	3,900
197	Առջևի անվակուղի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена передней ступицы	8,322	7,310	3,900
198	Հետևի անվակուղի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена задней ступицы	8,322	7,310	
199	Հետևի անվակուղի առանցքակալի փոխարինում	Замена подшипника задней ступицы	8,322	7,310	
200	Անվակուղի գամասեղի և հեղույսի փոխարինում (մեկ անիվի համար)	Замена хомута и гильзы ступицы (для одного колеса)	2,081	1,828	
201	Ձախ կամ աջ հողակալի խտարուկների փոխարինում	Замена сальников левого или правого шарнира (ШРУС)	6,242	7,310	
202	Յնցամղմբի թասակի փոխարինում	Замена чашек амортизатора	4,993	4,386	
203	Առջևի զսկանակի փոխարինում	Замена передней пружины	2,497	2,193	2,340
204	Առջևի ցնցամղմբի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена переднего амортизатора	5,826	5,117	3,120
205	Հարվածամղմբի վրանների փոխարինում	Замена втулок амортизатора			2,340
206	Ներքևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена нижнего рычага	6,242	5,483	3,120
207	Ներքևի լծակի վրանների փոխարինում 1 հատ	Замена втулок нижнего рычага 1 шт	4,161	3,655	3,120
208	Ներքևի լծակի հեղույսի փոխարինում	Замена болта нижнего рычага	832	731	780
209	Անվակների պաշտպանիչի փոխարինում	Замена защитника колеса	416	366	390
210	Ծարծիչի պաշտպանիչի փոխարինում	Замена защитника двигателя	416	366	390
211	Վերևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена верхнего рычага	6,242	5,483	2,730
212	Վերևի լծակի վրանների փոխարինում 1 հատ	Замена втулок верхнего рычага 1шт	4,161	3,655	2,730
213	Վերևի լծակի հեղույսի փոխարինում	Замена болта верхнего рычага	832	731	780
214	Գեղե հողակալի պաշտպանի փոխարինում	Замена чехла шаровой опоры	1,664	1,462	780
215	Գեղե հողակալի փոխարինում	Замена шаровой опоры	4,993	5,483	2,340
